ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Մարտիրոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վերիշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....3

Միջառարկայական կապերի դրսևորումները տարրական դասարանների մայրենիի դասերին……..…...4

Եզրակացություններ……..13

Օգտագործած գրականության ցանկ……..14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում կրթական բարեփոխումները ժամանակի հրամայականով անդրադառնում են կրթության բնագավառի կառուցվածքային բոլոր օղակներին ու կողմերին:

Աշխատանքի արդիականությունը: Վերջին ժամանակներս զգալի աշխատանք է կատարվել դպրոցում դասին ներկայացվող ժամանակակից պահանջները փոփոխելու, ուսուցման գործընթացում նոր ու արդյունավետ մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Ավելի հաճախ են կազմակերպվում դասապրոցեսներ, որտեղ համակցվում են ուսուցման արդյունավետ մեթոդներ և գործադրվում են նոր ու արդյունավետ հնարներ, որոնք մեծապես նպաստում են ուսումնական խնդիրների կենսագործմանը և առաջին պլան են մղում դասապրոցեսի առաջնակարգ պահանջները:

Այդ ընթացքում ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև միջառարկայական կապերի ապահովման, մեթոդական հանձնարարականների կատարման, ուսումնական ինֆորմացիայի հաղորդման, գրավիչ մուտքի ապահովման հարցերը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ձևերի ու միջոցների ընդհանուր համակարգում իրենց ուրույն դերն ունեն միջառարկայական կապերը, որոնք վերջին տարիներին ավելի են գրավում մեր տեսաբան ու պրակտիկ մանկավարժների ուշադրությունը:

Մանկավարժական առաջավոր փորձով ապացուցված է, որ ուսուցման ընթացքում միջառարկայական կապերի բացահայտումն ու ապահովումը նպաստում են աշակերտների ստեղծագործական հնարավորությունների զարգացմանը, նրանց մտավոր գործունեության ակտիվացմանը և բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործմանը:

Տարրական դասարաններում միջառարկայական կապերի օգտագործման համար կան առավելագույն նպաստավոր պայմաններ, եթե նկատի ունենանք բոլոր առարկաները մեկ ուսուցչի կողմից դասավանդելու պրակտիկան:

Այս գործնական հնարավորությունը ճիշտ ու նպատակահարմար օգտագործելու անհրաժեշտ պայմաններից մեկն էլ համապատասխան մեթոդական ձեռնարկների ստեղծումն է, որի համար բավականաչափ տեսական ու գործնական հիմքեր կան, եթե նկատի ունենանք, որ տարրական դասարաններում տարբեր առարկաների դասերին միջառարկայական կապերի օգտագործման հարցը զանազան առիթներով արդեն քննարկման է ենթարկվել հայ մեթոդական գրականության մեջ:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ միջառարկայական կապերի բազմազանությունը ուսուցման գործընթացում և, որ տվյալ հասկացության էությունը չի կարող սահմանվել միանշանակորեն, միջառարկայական կապերի երևույթների բազմաստիճան լինելը, որ նրանք չեն սահմանափակվում բովանդակության, մեթոդների, ուսուցման կազմակերպման ձևերի շրջանակներում, տվյալ հասկացության իմաստային նշանակությունների կարգավորումը, ինչպես նաև միջառարկայական կապերի տեսակների կանոնավորումը:

Նպատակից ելնելով՝ **առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝**

- Ցույց տալ միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում
- Միջառարկայական գիտելիքների, կարողությունների և էական առնչությունների ձևավորման արդյունավետությունը ուսուցման գործընթացում որոշել միջառարկայական կապեր իրականացնելու կարողությամբ:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են իրար հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ են:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկայական և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Այսօր դժվար ու անհնարին է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումն առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բարձրացման: Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր Մեծ դիդակտիկա աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը: «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով, նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

<<Այն ամենը, ինչ գտնվում է փոխադարձ կապի մեջ, պետք է ուսուցանվի հենց այդ կապերի հետ փոխկապացված ձևով>>,- նշել է Կոմենսկին [10,87]:

Բոլոր առարկաներն էլ կապված են իրար հետ, իսկ առարկաների միջև թվացյալ բացակայող կապերն ուղղակի անհրաժեշտ է, որ մենք նկարենք և ուղիներ գտնենք դրանք կիրառելու համար:

Եվ հասկանալի է, որ ամենից արդյունավետն ու ամենից ճիշտը մայրենիի դասերի ընթացքում այդ ամենը կարելի է իրականացնել:

Մայրենիի դասաժամերին գրեթե մշտապես առկա է այդ անքակտելի կապը՝ կերպարվեստ, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, երաժշտություն: Եվ հմուտ

ուսուցիչը այնպես պետք է դասը ներկայացնի, որ չզգացվի, թե ինչպես է նա անդրադառնում այս կամ այն երևույթին, կամ մի ոլորտից մի այլ ոլորտի: Սակայն կա մի շատ կարևոր պահ. եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ապա դասի բուն նպատակը կմվոի երկրորդ պլան, կդառնա ոչ կարևոր, նշանակում է պետք չէր ոչ մի ուրիշ միջոցի դիմել:

Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի է ունենում տարբեր եղանակներով և երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող գիտելիքների միջև, ընդունված է դա անվանել միջառարկայական կապեր:

Մյուս ուսումնական առարկաների հետ սերտ փոխկապակցությամբ մայրենի լեզվի կրթադաստիարակչական հսկայական դերը շատ լավ է բնութագրել Կ.Դ. Ուշինսկին իր <<Մայրենի լեզու>> ուշագրավ հոդվածում: <<Մայրենի լեզվի մեջ,-գրում է նա,- շունչ ու հոգի են առնում ամբողջ ժողովուրդը, նրա ողջ հայրենիքը. նրա մեջ ժողովրդական ոգու ստեղծագործ ուժով մտքի, պատկերի և հնչյունի են փոխակերպվում հայրենիքի երկինքը, նրա օդը, ֆիզիկական երևույթները, նրա կլիման, նրա դաշտերը, լեռներն ու հովիտները, նրա անտառներն ու գետերը, նրա մրրիկներն ու ամպրոպները՝ հայրենի բնության այն ամբողջ խոր մտքերով ու զգացմունքներով լի ձայնը, որ բարբառում է այնպես բարձրագոչ՝ մարդու սիրտ մասին դեպի իր հայրենիքը, սեր, որն այնպես հստակ է արտահայտվում մայրենի երգի մեջ, մայրենի եղանակներում, ժողովրդական բանաստեղծների շուրթերին: Սակայն ժողովրդական լեզվի պայծառ, վճիտ խորքերում արտահայտվում է ոչ միայն մայրենի երկրի բնությունը, այլև ժողովրդի հոգևոր կյանքի ամբողջ պատմությունը>> [9,127-128]:

Ռուս ականավոր մանկավարժ Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագործումը համարում էր արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի գործադրման տարբեր եղանակներ կան: Հմուտ ուսուցիչը (դասվարը) պետք է կարողանա ճիշտ ու տեղին օգտվի այդ եղանակներից:

Ամենից առաջ ուսուցման ողջ պրոցեսում անդրադարձ կապերի օգտագործումն է, որն կապվում է ներառական կապերի ճիշտ ու տեղին օգտագործման հետ: Նախորդ դասերին անցածը, նույնիսկ նախորդ տարիների անցածը հետևողականորեն պետք է կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նոր նյութի յուրացման համար:

- Մյուս կարևոր եղանակը ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման պրոցեսում: Բազմաթիվ գիտելիքներ, որոնք աշակերտը ձեռք է բերել նախորդ դասերին, պետք է օգտագործել ուսուցման պրոցեսում:
- Հաջորդը այլ գիտությունների տվյալների կիրառությունն է, որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման պրոցեսում: Եվ եթե ուսուցիչը ցանկանում է մայրենիի իր վարած դասը լիարժեք լինի, նպատակային լինի ակամայից պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների օգտագործմանը, որպեսզի իր դասը ուսանելի և հետաքրքիր դառնա:
- Մյուս ուսումնական առարկաների հետ սերտ փոխկապակցությամբ մայրենի լեզվի կրթադաստիարակչական հսկայական դերը շատ լավ է բնութագրել Կ.Դ. Ուշինսկին իր <<Մայրենի լեզու>> ուշագրավ հոդվածում: <<Մայրենի լեզվի մեջ,-գրում է նա,- շունչ ու հոգի են առնում ամբողջ ժողովուրդը, նրա ողջ հայրենիքը. նրա մեջ ժողովրդական ոգու ստեղծագործ ուժով մտքի, պատկերի և հնչյունի են փոխակերպվում հայրենիքի երկինքը, նրա օդը, ֆիզիկական երևույթները, նրա կլիման, նրա դաշտերը, լեռներն ու հովիտները, նրա անտառներն ու գետերը, նրա մրրիկներն ու ամպրոպները՝ հայրենի բնության այն ամբողջ խոր մտքերով ու զգացմունքներով լի ձայնը, որ բարբառում է այնպես բարձրագոչ՝ մարդու սիրտ մասին դեպի իր հայրենիքը, սեր, որն այնպես հստակ է արտահայտվում մայրենի երգի մեջ, մայրենի եղանակներում, ժողովրդական բանաստեղծների շուրթերին: Սակայն ժողովրդական լեզվի պայծառ, վճիտ խորքերում արտահայտվում է ոչ միայն մայրենի երկրի բնությունը, այլև ժողովրդի հոգևոր կյանքի ամբողջ պատմությունը>> [9,127-128]:

Նկարը և նկարչությունը տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին

Նկարը տարրական դասարանի բոլոր դասագրքերի կարևոր և առանձնահատուկ բաղադրիչներից մեկն է: Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես այբբենարանում (որոնց ճնշող մեծամասնությունը նկարներ են) այնպես էլ մայրենիի ընթերցարաններում ու դասագրքերում, որոնցում նույնպես նկարները մեծ տեղ ու դեր ունեն: Դասագրքերում օգտագործվող նկարները լինում են նկար-բառեր, նկար-նախադասություններ, նկար-պատմություններ և թեմատիկ նկարներ:

Այբբենարանում նկարները անչափ կարևոր միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար, քանի որ բառերով այդ ամենն հաղորդելու հնարավորություն չկա:

Մայրենիի գրքերում նույնպես շատ նկարներ կան օգտագործված: Ամեն անգամ ուսուցիչը պետք է պարզի տվյալ նկարի հիմնական նպատակը և ապա նոր անցնի ուսուցման պրոցեսում դրա օգտագործմանը: Տարրական դասարանների մայրենիի ընթերցարաններում շատ նյութեր կան հայ նշանավոր նկարիչների Գ. Բաշինջաղյանի, Հ. Այվազովսկու, Մ. Սարյանի մասին: Այվազովսկու նյութերը ուսումնասիրելիս պետք է տեղեկություններ տալ ոչ միայն արվեստի աշխարհահռչակ գործիչների, այլև դեպի արվեստի անսահման աշխարհը տանող կերպարվեստի ուրույն ճանապարհի մասին:

Պատմական գիտելիքների օգտագործումը

Պատմության ու մայրենի լեզվի միջառարկայական կապերի ապահովումը նպատակ ունի աշակերտների մեջ ձևավորվելու ժամանակի ըմբռնումը: Պատմական բնույթի բոլոր նյութերը պետք է մատուցել ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում տալով: Եվ այնպիսի պատկերավոր և ճիշտ ներկայացնել տվյալ պատմական ժամանակաշրջանը, որ այսօրվա տանկերի, հրթիռների և այլ ահավոր զենքերի դարում ապրող երեխայի համար Հայկ Նահապետի նետ ու աղեղով կռվելը, Վ. Մամիկոնյանի, նրա զորքերի հերոսական ու անձնազոհ պայքարը պարսկական փղերի դեմ հասկանալի դառնան, երեխաների համար միամիտ ու անհավանական չհնչեն:

Օրինակ, տարիներ առաջ տրվում էր այսպիսի միակողմանի հանձնարարական. <<Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր աշակերտների մեջ հայրենասիրության զգացմունք դաստիարակի իր առարկայի նյութի հիման վրա>>[9,240]:

Երգն ու երաժշտությունը մայրենիի դասերին

Օրվա դասերը երաժշտությամբ ամփոփելը կամ ավարտելը նույնպես բացառիկ կարևոր նշանակություն կարող է ունենալ երեխաների հոգնածությունը ցրելու, նրանց աշխուժացնելու, ակտիվացնելու ու ամրապնդելու տեսակետից: Երգն ու երաժշտությունը այն միջոցներից մեկն է, որը ճանապարհ է հարթում երեխաների համար դեպի գեղեցիկ աշխարհը: Երգն ու երաժշտությունը մայրենիի դասերին օգտագործելիս, դասը դառնում է հաճելի, գեղեցիկ, տպավորիչ ու անմոռաց: Դասին երգ ու երաժշտությունը կարող է օգտագործվել ուսումնասիրվող նյութի համար ընդհանուր ֆոն, որի վրա հետո պետք է ձևավորվի կոնկրետ թեման:

Թատերական արվեստի տարրերի օգտագործումը մայրենի լեզվի դասերին

Դերերով կարդալը թատերական արվեստի տարրերից ամենապարզն ու մատչելին է: Դերերով կարդալու ժամանակ աշակերտը մտնում է իր դերի մեջ. ավելի լավ է պատկերացնում իր կարդացածը և ձգտում է ձայնով կարդալու եղանակով ճիշտ վերարտադրել տվյալ գործող անձի հոգեվիճակը, թափանցել դերի էության մեջ: Այս աշխատանքը որոշակի հաճույք է պատճառում երեխաներին, բարելավում է կարդալու տեխնիկան: Անգիր արված նյութը դերերով արտասանելիս աշակերտները մտովի մտնում են իրենց դերի մեջ, իրենց խոսքը, շարժումները, հարց ու պատասխանը համապատասխանեցնում են մյուսների խոսքին ու շարժումներին: Գործածելի է բեմականացումը՝ հատկապես թեմատիկ խմբի նյութերի ամփոփման դասերին: Այն միանգամից դրականորեն կազդի նյութի յուրացման, երեխաների ճանաչողության սահմանների ընդարձակման, նրանց համակողմանի զարգացման վրա:

Ճարտարապետական և քանդակագործական արվեստի տարրերի օգտագործումը մայրենի լեզվի դասերին

Տարրական դասարաններում երեխաները տեղեկություն պետք է ստանան բազմաթիվ գիտությունների, արվեստի տարբեր ձևերի մասին, որպեսզի նրանց մեջ բազմակողմանի հետաքրքրություններ արթնանան դեպի շրջակա աշխարհը, դեպի մեզ շրջապատող առարկաներն ու երևույթները: Դասագրքերում բազմաթիվ նյութեր կան քանդակագործության և ճարտարապետության մասին, որոնք ցույց են տալիս դարեր շարունակ մեր քարաշերտ երկրում քարի հետ անընդհատ շփված մեր հին ժողովրդի քարակերտ հրաշալիքները, բացատրում են դրանց հավերժական գեղեցկության գաղտնիքները: Երեխաները գրքում հանդիպում են տարբեր գրողների, գիտնականների ու պետական նշանավոր գործիչների, պատմական անձնավորությունների ու իրադարձություններին նվիրված արձանների ու արձանախմբերի: Շատ բան կարող են տալ Եղեռնի հուշարձանի, Սարդարապատի հուշարձանների մասին անցկացված զրույցները: Երբեմն կարելի է էքսկուրսիա կազմակերպել դեպի այն հուշարձանները, որոնց մասին խոսք է լինում նյութերի դասարանական մշակման ժամանակ: Էքսկուրսիաները թե՛ ճանաչողական, և թե՛ գեղագիտական դաստիարակության տեսակետից ավելի շատ բան են տալիս երեխաներին, քան տեքստային մշակումները: Դասագրքերում նյութեր կան նաև մեր հին ու նոր քաղաքների (Անի,Դվին, Երևան, Էրեբունի, Էջմիածին), նշանավոր ճարտարապետական կառույցների (Գառնի, Զվարթնոց և այլն), որոնք հնարավորություն են տալիս խոսելու նաև արվեստի այդ բնագավառի մասին: Որպեսզի նրանք հոգով հարստանան, հաղորդակցվեն գեղեցիկի հետ, ճանաչեն ու սիրեն իրենց ժողովրդին, դաստիարակվեն բազմադարյան ավանդույթներով: Երեխաները ինքնուրույն կերպով այս ամենը դիտել, ճանաչել, ընկալել և մարսել չեն կարող, ուսուցիչը պետք է այս գործում ևս հմուտ առաջնորդ լինի նրանց համար: Շատ անգամ կարելի է այս ամենը միավորել, երգ-երաժշտություն, պատմություն, ճարտարապետություն կապել իրար և այդ ամենը ցուցադրել տեսանյութերի միջոցով: Օրինակ՝ Անիի մասին խոսելիս կարելի է դիտել «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» տեսահոլովակը: Կամ «Երևան դարձած իմ Էրեբունի» տեսահոլովակը:

Բնությունն ու բնագիտությունը մայրենիի դասերին

Բնությունն ու բնագիտական հասկացությունները, որպես ճանաչողական ու դաստիարակչական տեսակետից ընկած են ընթերցանության նյութերի թեմատիկ խմբավորումների հիմքում և տարբեր անվանումներով ու ձևակերպումներով կան գրեթե բոլոր դասարանների դասագրքերում: Այդ դասերը հնարավորություն են տալիս երեխաներին կապվել բնության հետ, զգալ տալ բնության անկրկնելի գեղեցկությունները, հաղորդակցվել գեղեցիկի հետ: Բնությանը վերաբերվող նյութերի ուսումնասիրությունը պետք է անպայման կապվի բնության հետ՝ ամենից առաջ կենդանի բնության դիտման, բնության հետ անմիջական շփման ձևով, իսկ ապա ֆիլմերի ու նկարների ցուցադրման միջոցով:

Տարրական դասարանների մաթեմատիկայի ծրագրով նախատեսված է դասագրքերում աշակերտներին տալ մաթեմատիկական որոշ եզրույթներ, որոնք բաշխված են պարզից բարդ սկզբունքով: Աշակերտները աստիճանաբար ծանոթանում են մաթեմատիկական լեզվին, երկրաչափական պատկերներին և յուրացնում դրանք նշանակող բառերը, մաթեմատիկական հասկացությունները, մաթեմատիկական մտածելակերպը: Ինչ խոսք այդ ամենը կատարվում է մայրենի լեզվի միջոցով: Ուստի առկա գործընթացում տարեցտարի ընդլայնվում է աշակերտներին հրամցվող բառապաշարը՝ հատկապես նոր եզրույթների բառամթերքը: Արդեն 2-րդ դասարանն ավարտելիս աշակերտը տիրապետում է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են հատված, ուղղանկյուն, նիստ, օրինաչափություն, արտահայտություն, տասնյակ, անհավասարություն, հավասարություն, պարագիծ, նվազելի, հանելի, գումարելի, գումար և այլն:

Դասագրքերում զետեղված խնդիրներն ու առաջադրանքները պարունակում են նաև համագործածական բառերի ստվար մաս, որոնք ուսման ընթացքում աշակերտը աննկատելիորեն դրանք ներմուծում է իր բառապաշար: 3-րդ դասարանում աշակերտների բառապաշարը համալրվում է նոր եզրույթներով ու գիտաբառերով, մաթեմատիկական ու երկրաչափական հասկացություններով՝ բեկյալ, գլան, բուրգ, ուղղանկյունանիստ, շրջանագիծ, հնգանկյուն, քառանիշ թվեր,

բաց բեկյալ, փակ բեկյալ, ճշմարիտ դատողություն, երկրաչափական մարմին, տեղափոխական, զուգորդական հատկություն և այլն: 4-րդ դասարանում խնդիրներն ու առաջադրանքներն առավելագույնս աչքի են ընկնում լեզվական հարուստ նյութերով, որոնք ոչ միայն բառապաշարի հարստացման աղբյուր են, այլև ճանաչողական գիտելիքների ընդլայնման հիմք: Այս դեպքում աշակերտներից պահանջվում է խնդրի պայմանը ճիշտ հաղորդելու, հարցերն ու հարցադրումները պարզ ու հստակ ձևակերպելու, խնդրի բովանդակությունը անսխալ վերարտադրելու կարողության: Մաթեմատիկայի դասաժամերին խստագույնս պետք է հետևել աշակերտների բանավոր խոսքի զարգացմանն ու բառապաշարի ընդլայնմանը: Այսպիսով՝ միջառարկայական կապ հաստատելով մայրենիի և մաթեմատիկայի միջև և զուգորդելով մայրենիի առարկայական պահանջներից բխող աշխատանքը մաթեմատիկայի դասավանդման ծրագրի պահանջներին՝ քայլ առ քայլ ու ներդաշնակորեն պետք է զարգացնել աշակերտների բառիմաստի իմացական մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական դպրոցում միջառարկայական կապեր ստեղծելիս լուծվում են կարևորագույն խնդիրներ, ձևավորվում է հայեցի լեզվամտածողություն, ազգային հոգևկերտվածք, աշխարհաճանաչողական տարաբնույթ տեղեկությունների միջոցով պատկերացումներ են ձևավորվում աշխարհի, բնության, մարդկային հարաբերությունների մասին, երեխան զարգանում է՝ որպես անձ, դաստիարակվում բարոյապես, հոգեպես, հղկվում են նրա գեղագիտական հայացքներն ու ճաշակը՝ նպաստելով նրա ինքնագնահատականի բարձրացմանը, ինքնաճանաչողությանն ու ինքնակառավարմանը:

Միջառարկայական կապեր օգտագործվող դասերին պետք է առաջադրվեն հետևյալ դիդակտիկական պահանջները.

1. Միջառարկայական կապերով դասը պետք է ունենա հստակ ձևավորված ուսումնաճանաչողական խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ են տարբեր առարկաներից գիտելիքների ներգրավում:
2. Միջառարկայական կապերով դասի ընթացքում պետք է ապահովվի սովորողների բարձր ակտիվությունը ուրիշ առարկաներից գիտելիքների կիրառման համար:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավոյան Հ. Մ., Սարգսյան Ռ.Վ., Ուսուցման պրոցեսի կատարելագործման խնդիրները, Երևան, «Լույս» 1981թ:
2. Հայ մանկավարժներ, գիրք Ա. Երևան 1958թ.:
3. Մելքումյան Մ. Ս., Միջառարկայական կապերի պրոբլեմը և հայրենասիրության դաստիարակումը, Երևան, «Լույս» 1973թ.:
4. Մելքումյան Մ. Ս, Թեզիսներ՝ «Նյութեր տարրական կրթության հարցերին նվիրված հանրապետական խորհրդակցության», Երևան 1973թ.:
5. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Ուսուցումը առաջին դասարանում, Երևան, «Լույս» 1983թ.:
6. Տեր-Գրիգորյան Ա. Ե, Ուսուցումը երկրորդ դասարանում, Երևան, «Լույս» 1985թ.:
7. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերի օգտագործումը տարրական դասարանների հայոց լեզվի դասերին, «Սովետական մանկավարժ» 1966, № 7:
8. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան 1986թ.:
9. ՈՒշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1949թ.:
10. Կոմենսկի Յա. Ա., Մեծ դիդակտիկա,Երևան,1962: